ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՍԱՇՐՋԱՆ՝ ԵՎԻՐՎԱԾ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 30-ԱՄՅԱԿԻՆ

Ապրիլի 29-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտությունների ակադեմիայի և ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի համատեղ գիտական նստաշրջան՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակի 30-ամյակին:

Նստաշրջանը ներածական իսոսքով բացեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:

— Լենինյան կուսակցության իմաստուն ղեկավարության շնորհիվ,— ասաց նա,— մեր ժողովուրդը, ցուցաբերելով անսահման հայրենասիրություն, համախմբվածություն և կամք, գլխովին ջախջախեց ֆաշիստական Գերմանիան և համաշխարհային բաղաքակրթությունը փրկեց կործանման վտանգից: Մեծ հաղթանակը շրջադարձային կետ հանդիսացավ մարդկության համաշխարհային պատմության մեջ: Պատերազմից հետո Արևելյան Եվրոպայի երկրները կանգնեցին սոցիալիզմի ուղու վրա, ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, ամրապնդվեց բանվորական և կոմունիստական շարժումն ամբողջ աշխարհում, գաղութային ճնշման տակ գտնվող ժողովուրդները ազատագրվեցին իմպերիալիզմից և բռնեցին ազգային ինքնուրույն զարգացման ուղին: Սովետական Միությունը այսօր շարունակում է մնալ այն հիմնական պատվարը, որին հենվում են առաջավոր ողջ մարդկությունը, սոցիալիզմի բոլոր ուժերը:

«Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի պատմական նշանակությունը» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ լրակից-անդամ Դ. Դալոյանը:

Գերմանական ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը մեր հայրենիքի կյանքում ամենածանր փորձությունն էր: «Այդ պատերազմում,— ինչպես նշվում է ՍՄԿԿ Կենտկոմի՝ «1941—45 թվականների Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի 30-ամյակի մասին» որոշման մեջ,— վճռվում էր աշխարհում առաջին սոցիալիստական պետության բախտը, համաշխարհային բաղաքակրթության, առաջադիմության և դեմոկրատիայի ապագան»:

Կոմունիստական կուսակցության գլխավորությամբ սովետական ժողովրդի և նրա բաջարի զինված ուժերի հաղթանակը ոչ միայն պաշտպանեց մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը, այլև հանգեցրեց ֆաշիզմի գաղափարական և բաղաքական սիստեմի կրախին, նրա ռազմական հզորության ջախջախմանը:

Սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության կոչով մեկ մարդու պես ոտքի ելավ՝ ի պաշտպանություն սոցիալիստական հայրենիքի: Սկսվեց մարդկության պատմության մեջ անանախադեպ մի գոտեմարտ, որը պատերազմ էր ոչ միայն երկու պետությունների միջև, այլև իմպերիալիզմի առավել ռեակցիոն ու ագրեսիվ ուժերի և սոցիալիզմի միջև: Պատերազմի ելքից էր կախված ինչպես սովետական ժողովրդի բախտը, սոցիալիզմի նակատագիրը, այնպես էլ համաշխարհային բաղաքակրթության հետագա զարգացման ուղիների հարցը: Հենց դա էլ պայմանավորում էր սովետական ժողովրդի, սոցիալիզմի առաջին երկրի պատմական միսիան՝ միջազգային պրոլետարիատի, գաղութային, կախյալ ու կիսակախյալ երկրների ժողովուրդների, համաշխարհային բաղաքակրթության հանդեպ:

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն խոսեց Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի աղբյուրների, ժամանակակից միջազգային լարվածության բուլացման, առաջադիմության, սոցիալիզմի ու դեմոկրատիայի ուժերի ամրապնդման գործում մեծ հաղթանակի ունեցած նշանակության մասին:

«Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ներկարարյանը:

Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության, հիտլերյան Գերմանիայի ջախջախման գործում,— ասաց նա,— իր արժանի ավանդն է բերել նաև Սովետական Հայաստանը: Պա-

տերազմին մասնակցեցին ավելի քան 500 հազար հայորդիներ: Երբ կուսակցության նախաձեռնությամբ կարմիր բանակի շարքերում սկըսվեց ազգային զորամասերի ստեղծումը, ձեվավորվեցին հայկական դիվիզիաներ, որոնք անօրինակ խիզախության փայլուն էջեր գրեցին մեծ Հայրենականի տարեգրության մեջ:

Սովետական Հայաստանը սխրանքներ գործեց նաև թիկունքում՝ ներդնելով իր ավանդը ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների, բոլոր հանրապետությունների հերոսական գործերի մեջ: Մոսկվայի, Ստալինգրադի, Կովկասի մատույցների, Կուրսկի և Ուկրաինայի համար մղված ճակատամարտերի օրերին Հայաստանը, եղբայրական Վրաստանի ու Ադրբեջանի հետ, ամեն ինչ անում էր նոր համալրումներ, զենք, հանդերձանք ու սննդամթերք ռազմաճակատ ուղարկելու համար: Հայաստանում թողարկվում էր մոտ 800 տեսակի ռազմական արտադրանք: Հայ ժողովուրդը Սովետական Հայաստանի պաշտպանության միակ և հուսալի երաշխիքը տեսնում էր Սովետական Միության ազատության մեջ,— վերջում ասաց զեկուցողը:— Այդպես են մտածել և գործել մեր երկրի բոլոր ազգերի և ազգությունների զավակները, և դա է մեծ ճաղքանակի կարևոր նախապայմաններից մեկը:

Նստաշրջանի արդյունքները ամփոփեց ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ